ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ.

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական տարին սկսվեց անբարենպաստ եղանակներով: Երկարատև անձրևները չթողեցին ժամանակին նախապատրաստելու դաշտերը՝ սածիլները տեղափոխելու համար, արդյունքում 1-1,5 ամիս ուշացումով՝ հունիս ամսին, նոր կարողացան կազմակերպել սածիլեցման աշխատանքները: Երկար մնալուց սածիլները հիվանդացել էին, անցել էր նրանց վեգերացիայի շրջանը: Մեր համայնքում հիմնականում մշակում են լոլիկ, սմբուկ և պղպեղ:

Մայիսի 5-ին այնուհետև հունիսի 5-ին տեղացած կարկուտը, որը ուղեկցվում էր ուժեղ պտտահողմի հետ զգալի վնաս հասցրեց գյուղացիների մշակաբույսերին: Ըստ հանձնաժողովի կողմից կազմած ակտի կարկուտը վնասել է 685 հա մշակաբույսեր, տուժել են 598 գյուղացիական տնտեսություններ: Մարզպետարանի կողմից

կազմակերպվեց տուժած տնտեսություններին օգնություն ցուցաբերելու տարբերակները, նախ ստեղծվեց հանձնաժողով վնասի իրական չափը ճշտելու համար, ԳԱՄԿ-ի մասնագետներ կողմից հրավիրվեցին գյուղատնտեսության բնագավառի մասնագետներ, որոնք իրենց խորհուրդներով բնակիչներին բացատրեցին ինչպես մեղմել և աստիճանաբար վերացնել կարկուտի հետևանքները:

Մարզպետարանի աջակցությամբ համայնքի գյուղացիական տնտեսություններին բաժանվեցին բոստան - բանջարանոցային սերմեր և դիզ վառելանյութ: Գյուղապետարանը մարզպետարան և «Արաքս» ՋՕԸ է ներկայացրել տուժած գյուղացիների ցուցակը հող հարկի և ոռոգման ջրի վարձավճարները զիջելու նպատակով:

Գյուղացիներից մի մասին հաջողվեց վերականգնել տարածքները, իսկ մի մասը հրաժարվեց հետագա մշակությունից:

Այս տարի գյուղում կառուցվելու է նոր տիպային բուժամբուլատորիայի շենք մեր համայնքի 5 % ներդրմամբ և Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության ԾԻԳ-ի հետ: Այդ նպատակով գյուղի կենտրոնից հատկացվել է 600 քմ հողատարածք և ներկա պահին կատարվում է անհրաժեշտ փաստաթղթերի հավաքման աշխատանքները:

Մայիսից վերաբացվեց մանկապարտեզը երեք խմբերում երեխաների թիվը հասնում է հարյուրի:

Այս տարի երկու նախադպրոցական խմբերի համար ներկայցրել և շահել ենք ծրագիր՝ նախադպրոցական տարիքի երեխաներին ուսուցանելու համար, այս պահին կատարվում է այդ նպատակի համար առանձնացված տարածքի վերականգման և հարդարման աշխատանքները:

Առաջին կիսամյակում տեղի է ունեցել չորս ավագանու նիստեր, գյուղապետարան են դիմել 860 բնակիչներ:

Այս կիսամյակում սեփական եկամուտներից հավաքագրվել է 2200,0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ